

## ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՎԵՐ



11

ԵՐԱԾՈՒՅՈ

Ա. ԱՂՈՒՔԾ, ՆԱՊԱՇՏԱԿԸ, ԱԲԱՂԱԴՀ ԵՒ ՅՈՒՊՈՎ

Մի անգամ աղուէսը ճգնաւոր է ձևանում և ուղղեցում  
դէպի Երուսաղէմ՝ ուխտ ծանապարհին նրան հանդիպում են  
Նապաստակը, Աքաղաղը և Յոպոպը, օրոնք գրաւուելով Աղ-  
ուէսի քարոզներից, ընկերանում են նրան, միասին ուխտ գնա-  
լու: Սա ճանապարհը փոխում և բերում է դրանց իւր բնի մօտ:  
«Ճղերք, ասում նա, երբ արդէն բնին էին հասել, մըտ-  
նենք այս վանքը, խռոտովանենք, և ապա թեթևացած շա-  
ռունակենք մեր ճանապարհը»:

Ընկերները համաձայնում են, և երբ բոլորը մտնում են Աղուէսի բունը, սա բռնում է նախ Նապաստակին և ասում:

«Դու մեղաւոր ես, որովհետև շները քո լետևից ընկնելով չեն հասնում և յօդնում, սատակում են։ Դու արժանի չես ուխտ գնայու։ Դու պէտք է մեղքիդ պատիժը կրես։»

Այս ասելով խեղդում է նրան և փառաւորապէս ու-  
տում: Յետոյ դառնում է Աքաղաղին.

«Գիտես, ասովմ է նա, դու էլ շատ արդար չես. դու

առաւօտներն այնպէս վաղ ես կանչում, որ կարավանը կարծելով թէ լուսացել է, ճանապարհ է ընկնում և կոտորւում, Զէ, դու էլ արժանի չես ուխտ գնալու, լաւ է քեզ էլ ուտեմ»:

Հերթը գալիս է Յոպոպին, բայց սա խնդրում է թոյլ տալ իրեն գնալ վկաներ բերելու, որոնք վկալեն իւր անմեղութեան մասին։ Աղուէսը լուսալով, թէ սա գնալու իւր ընկերներին է բերելու՝ թոյլ է տալիս։ Սա թռչում գնում է որսկան շների մօտ և թփից թռուփ թռչելով՝ նրանց բերում Աղուէսի բնի մօտ։ Հէնց որ շները նկատում են Աղուէսին, իսկոյն վրան են ընկնում և բկից բռնում, իսկ Յոպոպը հեռուից նալելով՝ ասում է. «Հը՛, հերեք է, թէ գնամ ուրիշ վկաներ էլ բերեմ»։

### Բ. ԱՂՈՒԷՍՆ ՈՒ ԱԳՐԱԿԻԾ

Աղուէսը ագռաւին բռնելու նպատակով պառկում և սատկած է ձեանում։ Ագռաւը գալիս և սրա շուրջը մի գիծ է գծում։ Աղուէսը բոլորովին չի շարժում։ Սիրտ առած գալիս ոտի, ականջի վրայ կանգնում և անմիջապէս թռչում է։ Աղուէսը շարունակում է անշարժ մնալ։ Վերջապէս գալիս և կանգնում է թաթերի վերալ, երբ Աղուէսը կենդանանում և բռնում է նրան։

«Խնդրում եմ քեզ, Աղուէս, աղերսում է Ագռաւը, ինձ խորովի՞ր կեր, բայց մի տանիք ալդ քրծից վալը գլորիր, որովհետեւ պապս գլորուեց և կտոր կտոր եղաւ»։

Աղուէսն այս իմանալով, իսկոյն տարաւ նրան և քրծից վալը գլորեց։ Ագռաւը թռաւ և Աղուէսի բերանը բաց թռղեց։

## Գ. ԱՂՈՒԵՄՆ ՈՒ ԱՂԱԽՆԻՆ

---

Աղուէսը տեսաւ աղաւնուն մի ծառի վերալ կանգնած, մօտ գնաց և գունչը վեր ցցելով՝ ասաց.

«Բարե քեզ, իմ աղաւնիկս, իմ սրտակից բարեկամս, ինչպէս ես, լաւ ես, ինչո՞ւ ես մենակ մնացել։ Լոելով հեռուից ձայնդ, շտապեցի գալ քեզ տեսնելու. շատ ժամանակ է, որ իրար չենք տեսել։

— Նատ շնորհակալ եմ, որ ինձ չես մոռացել, թէև չեմ էլ լիշում թէ երբ ենք բարեկամացել։ Նատ ժամանակ էլ է, որ ալս կողմերում չէիր երևում, ալնպէս որ ես կարծում էի, թէ դու մեռել ես։

«Ի՞նչ ես ասում, հոգիս, պատասխանում է աղուէսը. ձայնդ ականջս չէ հասնում, վեր եկ այստեղ խօսենք և մէկ-մէկու հասկանանք։»

— Չեմ կարող իջնել, վախենում եմ։

«Չլինի՛ թէ ինձնից ես վախենում, ալդ ինչպէս կարելի է։»

— Ո՞չ. բայց միայն դու չես, մբթէ ուրիշ գաղաններ չկան։

«Ի՞նչ ես խօսում, մբթէ չես լսել, որ հրաման է դուրս եկել, որ ոչ մինը միւսին վնաս չտայր։»

— Մբթէ, ալդ ինչպէս լաւ է եղել, ես էլ զարմացալ, թէ ալդ ինչպէս է, որ դու էլ շներից չես վախենում, որ ահա գալիս են։

Աղուէսը որ շների անունը լսեց, իսկոյն ականջները սըրեց և պատրաստուեց փախչելու։

— Ինչո՞ւ ես գնում, ասաց Աղաւնին, սպասիր քիչ խօսենք։ Զէ որ ասացիր, թէ հրաման կալ. էլ ինչի՞ց ես վախենում։

«Ե՞՞հ, ով գիտէ, կարելի է, որ շները դեռ ևս լսած չլինին ալդ հրամանը, ասաց Աղուէսը և պուկ ընկաւ։

---

## Դ. ԱՂՈՒՔԸԸ, ԿԱԶԱՂԱԿԸ ԵՒ ԱԳՈՒԱԽԸ

Կաչաղակը մի ծառի վրայ ըուն էր շինել և երեք ձագ հանել: Մի օր Աղուէսը գալիս է և ներքեից ձայն տալիս. «ԱՌ կաչաղակ, բունդ քանդիր, որովհետև ալս ծառը կըտ ըելու եմ, որպէսզի ալստեղ վար անեմ»:

—Ձագերս գեռ շատ փոքր են, 'ի սէր Աստծու, մի քիչ սպասիր, աղաջում է կաչաղակը:

«ԶԵ, չի կարելի, շուտ արա», շտապեցնում է Աղուէսը: Վերջապէս կաչաղակը տալիս է Աղուէսին իւր ձագերից մինը, որ գոնէ երեք օր սպասէ:

Երեք օրից յետոյ Աղուէսը նորից գալիս է և կաչաղակի մի ձագն էլ տանում է՝ դարձեալ երեք օր սպասելու պարմանով:

Կաչաղակը սաստիկ տիրած մտածում է, երբ ագռաւը գալիս է մօտը և հարցնում պատճառը: Կաչաղակը պատմում է, բայց Ագռաւը ծիծաղում է նրա լիմարութեան վերալ և ասում, թէ Աղուէսը բնչպէս կարող է ծառը կարել, որտեղից կարող է կացին գտնել:

Երեք օրից յետոյ Աղուէսը նորից է գալիս, և երբ նոյնը կրկնում է, կաչաղակը անվախ պատասխանում է. «Կտրիր, թէ կարող ես, քեզ ով է տուել կացին»:

Աղուէսը զարմացած հարցնում է թէ ով նրան ալդ սովորացրեց:

—Ագռաւը, պատասխանում է կաչաղակը:

—Լաւ, ասում է Աղուէսը և գնում որոնելու Ագռաւին: Վերջինս երբ սրան նկատում է, բռնում է մի ձագ և ձգում Աղուէսի առաջ: Աղուէսը տեսնելով Ագռաւին, աշխատում է տանել նրան գէպի մի լէշ, որպէսզի կարողանալ նրա ուտելով զբաղուած միջոցին վրայ ընկնել և բռնել: Իսկ Ագռաւը փոքր առ փոքր թռչելով՝ քաշ է տալիս նրան գէպի որսորդը: Եւ յանկարծ շները վրայ են հասնում և բռնում Աղուէսին:

— Հը՝, բացականչում է Ագռաւը, ով ում թակարթը ձգեց. ես էլ Կաչաղակը չեմ, որ խափես ձագերն ուտես:

## Ե. ԱՂՈՒԵԾԸ, ԱՔԱՂԱՂԱ ԵՒ ՇՈՒՆԸ

Նունն ու Աքաղաղը երկար ճանապարհորդութիւնից յօդ-նած՝ գիշերում են մի գիւղում. Աքաղաղը մի ծառի վրայ, իսկ Շունը՝ եկեղեցու դռանը: Կէս գիշերին Աքաղաղը սկսում է կանչել իւր ծուղրուղուն: Մի Աղուէս իմանում է և մօտենում նրան:

«Ա՛հ, ինչպէս լաւ է, որ ալսօրուալ տօնի համար գուշորհ ես բերել ալստեղ, ասում է Աղուէսը Աքաղաղին. քանի ժամանակ է մի լաւ ժամանացութիւն չեմ լսել, ոչ էլ մեղքերս խոստովանել: Շուտ արա, բաց եկեղեցին, մի քիչ աղօթեմ:

— Բանալին երեցփոխի մօտ է, պատասխանում է Աքաղաղը. խնդրի նրան, որ բաց անէ, ես էլ իսկոյն կ'իջնեմ:

Աղուէսը նալում է շուրջը, որ տեսնի թէ ով է երեցփոխը և երբ տեսնում է Շանը՝ «լեղապատառ» սկսում է փախչիլ:

— Կաց մտնենք եկեղեցի, կանչում է Աքաղաղը:

«Զէ, չէ, ձեր եկեղեցին մտնող չի լինիլ, քանի որ այդպիսի երեցփոխ ունիք», պատասխանում է Աղուէսը և փախչում:

## Զ. ԱՂՈՒԵԾԸ, ԱՔԱՂԱՂԱ ԵՒ ՇՈՒՆԸ

Մի գիւղացի իւր Աքաղաղին սսկոր, իսկ Շանը՝ կուտ էր տալիս: Սրա վերալ բարկացած՝ Աքաղաղն ու Շունը եղբար-բանում են և վճռում գնալ մի նոր գիւղ հիմնել:

«Ի՞նչ կալ որ, համոզում է Աքաղաղը Շանը, ես կը

քարձրանամ ծառը կը կանչեմ, իսկ դու կը մնաս ներքե-  
ռում և կը հաշես, մարդիկն էլ կը լսեն մեր ձայնը, կը գան-  
տներ կը շինեն և կը բնակուին:

Նունը համոզւում է և երկուսն էլ գնում են մի հե-  
ռու տեղ և պատրաստում գիւղ հիմնելու: Աքաղաղը բարձ-  
րանում է մի ծառի վերայ և բարձր բարձր ծուղրուղու կան.  
Հում: Իսկ Նունը հաշելուց յօդնած՝ մի քիչ հեռու պառ-  
կում է:

Մի Աղուէս լսելով աքաղաղի ձայնը՝ մօտենում է նրան  
և հարցնում, թէ բնչ է ուզում տաել:

«Մենք ուզում ենք ալստեղ գիւղ հիմնել», պատասխա-  
նում է Աքաղաղը:

... Դէս որ ալդպէս է, շարունակում է Աղուէսը, ես էլ  
կը գամ ալստեղ բնակուելու, ինձ էլ կ'ընդունէք:

«Զգիտեմ, հարցրու տանուտիրոջը, որ ալնտեղ պառկած  
է, պատասխանում է Աքաղաղը:

Աղուէսը նախում է շուրջը և հենց որ տեսնում է Շա-  
նը՝ սկսում է փախչել:

«Հը», ինչի՞ ես գնում, հարցնում է Աքաղաղը:

— Զէ, եղբայր, ալստեղ դիւղ շիշ շինուի, քանի որ ալդ-  
պէս տանուտէր կալ, պատասխանում է Աղուէսը և հեռա-  
նում:

### Ե. ԱՂՈՒԷՍՆ ՈՒ ԱՅԾԸ

Աղուէսն ու Ալծը միասին ցորեն են ցանում: Երբ ար-  
տը հասնում է, գարձեալ միասին հնձում, կալսում, լարդ ու  
ցորենը միմեանցից ընտրում և ապա ուզում են իրար մէջ  
քաժանել: Այս ժամանակ նրանց մէջ վէճ է ծագում, որի  
պատճառով որոշում են գնալ իւրաքանչիւրը երկու բաժա-  
նարար բերել, որպէսզի նրանք բաժանեն: Աղուէսը գնում է  
անտու և երկու գալլ բերում լարդի կոյտի մէջ թագնում:  
Իսկ Ալծը գնում է գիւղ և երկար իզուր թափառելուց յե-

տոյ միալնակ վերագառնում։ «Ինչպէս տեսնում եմ, ասում է Աղուէսը, դու էլ, ինչպէս և ես, չկարողացար բաժանարարներ գտնել. արի բանը երգումով վերջացնենք։ Երգուիր այս լարգով, որ ստանալով ալսքանը՝ պիտի բաւականանաս և ուրիշ ոչինչ չպիտի պահանջես»։

Նատ լաւ, ասում է ալծը, երդում եմ։ Այս ասելով նա բարձրացնում է երկու թաթիկները և խփում յարդին. բայց այդ միջոցին դուրս են պղծնում յարդի միջից երկու գալ և խեղճ Ալծին պատառոտում։ Բոլոր ցորենը մնում է Աղուէսին։

### Ը. ԱՂՈՒԷՍԸ ԵՒ ԱՅՆԸ

Աղուէսը և Ալծը ընկերացան և միասին մի արտ ցանեցին։ Երբ արտը հասաւ, նրանք եռանդով սկսեցին հնձել Օրը սաստիկ տաք էր և քրտինքը Ալծի ճակատից կաթիլ հոսում էր։

«Աղուէս եղբայր, ասաց Ալծը, չես կարող մի քիչ սուսը ջուր բերեր։

— Ինչու չէ, այս ըստիս, ասաց Աղուէսը, առաւ փարզը և թռաւ։

Ալծը նստեց գեղի տակ, սպասելով ջրին. սակայն Աղուէսը շատ ուշացաւ. ճարահատուած վեր կացաւ գործը շարունակեց։ Բայց ոչ միայն այդ օրը, այլև երկու շաբաթ շարունակ Աղուէսը չերևաց։ Խեղճ Ալծը միայնակ հնձեց արտը և սկսեց կալսել։ Այդ ժամանակ յանկարծ հեռուից երեւը Աղուէսը՝ ջրի սափորը ձեռին։ Շտապ շտապ գալով՝ Աղուէսը երբ մօտեցաւ կալին, ձգեց ձեռից սափորը և կոտըց. Աղուէսը մօտեցաւ կալին, ձգեց ձեռից սափորը և կոտըց. «Փուհ, բացականչեց նա, Աստուած կտրի վրազ բանը»։ Ալծը բարկացաւ Աղուէսի վերալ, որ այնքան ուշացաւ, իսկ սա էլ «միւննտես բարձաւ», թէ նրա համար այնքան չարչարուել և ջուր է բերել։ Վերջապէս երեկոյեան որոշեցին բաժանել ցորենը։

«Յորենը ես կը վերցնեմ, ասաց Աղուէսը, իսկ լարդը դու վերցրու, որովհետև ես շատ եմ աշխատելու:

—Աստուած ունիս, ասաց Ալծը. միթէ դու ինձնից շատ ես աշխատել:

«Այո՛, պատասխանեց Աղուէսը, կուզես կ'երդուիմ»:

—Լաւ, ասաց Ալծը, վաղը գնանք օճախի վրալ երդուիր:

Աղուէսը մտքում ծիծաղեց Ալծի վրալ և խոստացաւ զնալ: Նոյն գիշեր Ալծը գնաց Շան մօտ, պատմեց նրան անցքը, և խնդրեց, որ օճախի մէջ թաք կենալ, վերան էլ մոխիր ածիր:

Առաւօտեան Աղուէսն ու Ալծը գնացին օճախի մօտ: Աղուէսը բարձրացրեց թաթիկները և աշագին ուժով խփեց օճախին. իսկոյն մոխրի մէջ թաղուած Շունը, սաստիկ հարուածից կատաղած՝ վեր ցատկեց և բռնեց Աղուէսի ըկից: Խեղճը հազիւ հազ կտրողացաւ գլուխն ազատել և փախչել:

Ալծը ազատուելով Աղուէսից, բաժին հանեց Շանը և այնուհետև հաշտ կերպով ապրեց նրա հետ:

Թ. ԱՂՈՒԷՍԸ, ԵՂԶԵՐՈՒՆ, ԵՂՆԻԿԸ ԵՒ ՆԱՊԱՍՏԱԿԸ

Մի անգամ Աղուէսը, Եղջերուն, Եղնիկը և Նապաստակը ընկերացած գնում են, երբ լանկարծ ընկնում են մի գըրեի մէջ: Երբ սաստիկ քաղցում են, որոշում են ուտել նրան, որի անունը տգեղ է:

Հյաստրակ,

Վղնները քնաստրակ \*),

Ասում է Աղուէսը և պատառուում Նապաստակին:

Քիչ յետոյ Եղնիկին են ձեռք առնում.

Գիտար,

Մինն է! պըտէր ծխտար \*\*):

\* ) Նապաստակ, ոտները բարձրացրած,

\*\*) Եղնիկ, մինն էլ պէտք էր, որ նրան ճխտէր.

Մնում են Աղուէսն ու Եղջերուն.

Ե՛ բախրա,

Վրնննըդ կախ ըրա.

ասում է Աղուէսը և նրան էլ ուտում: Յետոյ մտածում է,  
թէ բնչպէս գուրս գալ գրից:

### Ճ. ԱՂՈՒԷՍՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Սի օր Աղուէսը դունչը ցցած գնում էր, երբ յան-  
կարծ ընկաւ մի հորի մէջ: Երկար չարչարուեց նա, որպէսզի  
դուրս գալ, բայց չկարողացաւ: Երբ տեսաւ, որ Գալլը գալիս  
է, իսկոյն իւր վերայից թափուած բրդերը հաւաքեց և դը-  
րեց դլիսի մօտ: Գալլը մօտեցաւ հորին և ներս նալելով հարց-  
րեց Աղուէսին, թէ այնտեղ բնչ էր անում:

—Ոչինչ, պատասխանում է Աղուէսը. ալստեղ մի տիկ  
պանիր կալ, որքան ուտում եմ, չի վերջանում:

«Մի քիչ էլ ինձ տաս», խնդրում է Գալլը:

—Նատ լաւ, պատասխանում է Աղուէսը. հանիր ինչ  
հորից, մնացածը քեզ:

Գալլը բռնում, քաշում հանում է Աղուէսին հորից և  
ինքը թռչում ընկնում է պանրի վերայ: Սակայն որ-  
քան մեծ է լինում նրա զայրոլթը, երբ պանրի փոխարէն  
միայն Աղուէսի բուրդն է գտնում:

### ՃԱ. ԱՂՈՒԷՍՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Մի անգամ Աղուէսն ու Գալլը ընկերանում են: Աղուէ-  
սը ամէն օր մի մի հաւ է զողանում բերում, միասին ու-  
սում են, իսկ Գալլը ոչինչ չի կարողանում բերել: Մի օր էլ  
Գալլից ձանձրացած՝ զնում է և տեսնում, որ մի աչքը կոյր  
հարս են տանում. իսկոյն թռչում է ձիու գաւակը և կամա-

ցուկ շշնջում հարսի ականջին. «Ի՞նչ կը տաս, որ չասեմ թէ մի աչքով կոյր ես»։ Հարսը խոստանում է իւր ճտանոցը (Ճանեակ) և սեարմայ կոճակները։ Աղուէսը իսկոյն պարզում է պրչը, որ վերան կապէ, և ձիուց վալր թռչելով ճնկճնկալով գալիս է տուն։ Գալլը տեսներով Աղուէսի պոչի գեղեցիկ զարդարանքները, նախանձում է և հարցնում, թէ որտեղից գտաւ։

—Գնացի պոչս կախեցի ջրի մէջ, պատասխանում է Աղուէսը, ձկները զարդարեցին։

«Ուրեմն ես էլ գնամ, տսում է գալլը և գնում պոչը կախում է գետի մէջ։

Իսկոյն աղուէսը գնում է մօտակալ հաւաբունը, հաւերին վախտացնում և վազում դէպի գալլը։ Շները ընկնում են Աղուէսի յետեկից և գալով գանում Գալլին, որ ուզում է փախչել, բայց պոչը սասուցին սաստիկ կպած է լինում։ Շըները թողնում են Աղուէսին և լարձակում Գալլի վերալ, որ բոլոր ճիգը թափելով՝ քաշում կարում է պոչը և փախչում։

Նոյն օրը նրանք հանդիպում են միմեանց մի ջրաղացում։ Գալլը բռնում է Աղուէսի օձիքից և պահանջում, թէ ինչու շներին վրալ տուեց։

—Ես վրալ չտուի, ասում է Աղուէսը, ալ հարցրու ջրաղացպանին։

Գալլը դիմում է ջրաղացպանին և սա Աղուէսի խորհրդով ասում է, թէ լիրակի դա չէր, ալ նա, որ քիչ առաջ քեզ նկատելով՝ մտաւ այս ջրաղացի քարի տակ. ուզնեմ ես, արի հանենք։

Այս ասելով՝ ջրաղացպանը բարձրացնում է ջրաղացի քարը և կանչում Գալլին, որ թաթերը դնի քարի տակ և ալդպէս բարձրացրած պահի, մինչեւ որ ինքը մտնի թաք կացածին հանի։ Գալլը դնում է թաթերը քարի տակ, իսկ ջրաղաց պանը վազում ջրաղացի ջուրը կապում է։ Քարը դառնում է և փշում Գալլի թաթերը և իրեն։ Իսկ Աղուէսը թողնում փախչում է։

## ՃԲ. ԱՂՈՒԵԾՆ ՈՒ ԳԱՅԼՀ

Մի անգամ Աղուէսը մի կտոր պանիր է տեսնում մի թակարթի մէջ. շատ է հոտմտում, բայց և ալնպէս չի համարձակւում վերցնել։ Այդ միջոցին Գալլը անց է կենում ալդ տեղից։

—Գալլ եղբայր, կանչում է Աղուէսը, եկ ալս պանիրը կեր։

Գալլը մօտ է վազում և տեսնելով պանիրը, զարմանում է, թէ ինչպէս Աղուէսը չի վերցնում ուտում, ուստի և հարցնում է նրան։

—Դու ինչու չես ուտում։

«Այսօր ուրբաթ է, պաս է», պատասխանում է Աղուէսը ջերմեռանդութեամբ։

Գալլը անմիջապէս լարձակւում է պանիրի վրայ, սակայն թակարթը բռնում է վզից։

Այս տեսնելով Աղուէսն իսկոյն վերցնում է պանիրը և սկսում ուտել։

«Հապա պաս էլքը, ասում է Գալլը զարմացած։

—Պասը քու վիզդ անցաւ, պատասխանում է Աղուէսը։

## ՃԳ. ԱՂՈՒԵԾՆ ՈՒ ՌԻԴՏԸ

Մի անգամ Աղուէսը, Գալլը և Արջը ընկերացել են։ Ամէն օր մինը հերթով գնում էր որս անում, բերում երեքը միասին ուտում էին։ Երբ հերթը հասաւ Աղուէսին, սա գնաց, երկար որոնեց և վերջը տեսաւ մի ուղտ, որ հանգիստ կերպով տրածում էր, քաշ տալով իւր կապը։ Աղուէսը վախվախելով կամաց կամաց մօտենում, բռնում է կապից և քաշ տալիս։ Ուղտն անմիջապէս նրան հետեւում է։ Աղուէսը երկիւղից սկսում է վազել, Ուղտն էլ վազում է, յետոյ սիրտ է առնում սկսում է հանգարտ գնալ, Ուղտն էլ

Հանդարտեցնում է քալլերը: Երբ հասնում են Արջին ու Գարչին, սրանք սարսափած լետ են քաշուում:

— Ի՞նչպէս ուտենք այդ վիթխարի կենդանուն, ասում են նրանք. դա մեզ իւր ոտների տակ կը տրորի:

«Այդքան խելք չի ունենայ, պատասխանում է Աղուէսը. եթէ խելք ունենար, այդ ահագին մարմնով չէր ընկնիլ ետևիցս ու գար ալստեղ»:

### ԺԴ. ԱՂՈՒԻՍԸԸ, ԳԱՅԼԸ ԵՒ ԶՈՐԻՆ

Մի անգամ Աղուէսը, Գալլը և Զորին միասին ճանապարհորդում էին: Ճանապարհին երբ սրանք սաստիկ քաղցեցին, որոշեցին ուտել իրենցից ամենափռքըին:

«Ես, ասաց Աղուէսը, նոյնահապետի տապանումն էի, երբ ջրհեղեղ էր և երբ ցամաքեց, դուրս ելայ, և թափառում եմ մինչև հիմար»:

— Իսկ ինձ, ասաց Գալլը, Աստուած ստեղծեց և յանձնեց Ադամին:

— «Իմ տարիքս ինձ լալտնի չեն, ասաց իւր հերթին Զորին, միայն Ադամ գրել է այն իմ սմբակի վրալ, որովհետեւ ես կենդանիների մէջ միակ անծինն եմ: Թէ կամենում էք, կարդացէք»:

Աղուէսը մտածեց օգտուել հանգամանքից, մօտենալ և բռնել նրա փորից. ուստի և հպարտ հպարտ մօտեցաւ կարդալու: Բայց հէնց որ նա դունչը մօտեցրեց, ջորին մի այնպիսի աքացի տուեց, որ խեղճ Աղուէսը տեղն ու տեղը պառկեց: \*)

\*) Մի քանիքն էլ պատմում են, իրբ թէ Աղուէսը համոզում է Գալլին կարդալու, որին և՛ հասնամ է հարուածը, ուղիղ այնպէս՝ ինչպէս պատմում է բընըկէ Աղուէսի մէջ:

Ճ. ԱՂՈՒԵՍՆ ՈՒ ԱՐՁԸ

---

Մի օր Արջը մի ժայռի տակ ինքնաբաւական կերպով պարկած, մռնչում է և ասում. «Արդեօք ինձնից աւելի սրտոտ և ուժեղ կենդանի կամ»:

Այս լսում է Աղուէսը և կամացուկ մի փոքրիկ քարձում Արջի գլխին. Սա իսկոյն սարսափած վեր է թռչում և վախից մի անկիւնում թաք կենում:

Մի քիչ լետոյ Աղուէսը մօտենում է նրան և ծիծաղելավ հարցնում.

«Հը՛, Բնչ ես կուչ եկել, մի գուցէ իմ ձգած քարիցս վախեցար:

Արջը շարժում է գլուխը և ինքն իրեն մտածում

Ճ. ԱՂՈՒԵՍԸ, ԳԱՅԼԸ ԵՒ ԱՌԻՒԾԸ

---

Մի անգամ Գալլը սաստիկ քաղցած այս ու այն կողմ թափառելիս պատահում է Առիւծին: Սա նախատում է նըրան, թէ էլ Բնչ գազան է, որ մի բան էլ չէ կարողացել ձեռք ձգել, ուտել:

«Ի՞նչ անեմ, ասում է գալլը, շատ հօտերի տեղ գիտեմ, սակալն հարիւրաւոր զներ կան, ճրուրդս բարերարը կը հանեն: Դի սէր Աստծու, դու մի ճար արա»:

—Լաւ, ասում է Առիւծը, գնանք ցոյց տուր հօտը:

Առիւծն ու Գալլը գնում են. պատահում է Աղուէսը: Սա իսկոյն հասկանում է, որ սրանք որսի են գնում, շատ հեռուից եօթն անգամ գլուխ տալով, քծնելով մօտենում է Առիւծին և ինդրում, որ իրեն էլ հետները տանեն:

Առիւծը համաձայնում է և սրանք գնում մի կով, մի ոչխար և մի գառն են փախցնում:

Երբ պատրաստուում են ուտելու, Առիւծը առաջարկում է Գալլին՝ բաժանելու որսը իրենց մէջ:

— Կովը քեզ, ասում է Գալլը, ոչխարը ինձ, իսկ Գառը՝ Աղուէսին:

«Ի՞նչ լաւ բաժանեցիր, գովում է Առիւծը. արի մի քիչ օրհնեմ»:

Գալլը ուրախացած մօտենում է, բայց Առիւծը թաթով այնպէս է խփում գլխին, որ տեղն ու տեղը պառկում, չորանում է:

— Սա լաւ չբաժանեց, դու փորձիր, ասում է Առիւծը Աղուէսին, որ սարսափած իւր գլուխն էր լալիս:

— «Ոչխարը առաւօտեան կեր, վերջապէս ասում է Աղուէսը՝ գողգողալով, կովը կէս օրին, իսկ գառը մնալ երեկոյեան, որովհետև գիշերը երկար է»:

«Իսկ դու, հարցնում է Առիւծը»:

— Ե՞ս, ասում է Աղուէսը. չգիտե՞ս որ թագաւորի սեղանի մնացորդները տասը հոգու կը կշտացնեն: Ես էլ քո թողած ոսկորները կը կռծեմ, կը կշտանամ:

Առիւծին դուք է գալիս այս պատասխանը, ուստի հարցնում է.

«Աղուէս, ումնից առար ալդ խելքը»:

— Պառկած եղբօրիցս, պատասխանում է Աղուէսը:

(Կը շարունակուի)

Ե. Լ.

